

Դժբախտաբար, շատ վատ “դիզայն”

Ինչպես է ԵՄԽՎ Սոնիթորիզի խմբի անդամ Անդրեաս Գրոսը գնահատել հանրաքվեի ընթացքը Ադրբեջանում:

ԵՄԽՎ անդամ Անդրեաս Գրոսը այցելել է 6 ընտրատեղամաս՝ Ադրբեջանում անցկացվող հանրաքվեի ընթացքը դիտարկելու համար: “Ես մասնակցել եմ 15 հանրաքվեների հասկանալու համար, որ ավելի լավ է այցելել քիչ թվով ընտրատեղամասեր, բայց այնտեղ ավելի երկար մնալ”, - ասել է Գրոսը “Էխո”-ին տված բացառիկ հարցազրույցի ժամանակ մինչ շաբաթ օրը Բաքվից մեկնելը: “Ես այցելել եմ երկու ընտրատեղամաս Բաքվում, երկուսը Խաչմասում եւ երկուսն էլ Սումգայիթում”:

ԵՄԽՎ անդամը նշեց, որ այս անգամ նա ոչ մի խնդիր չի ունեցել Ադրբեջան այցելելու ընթացքում: “Իմ մեկնելը հարցականի տակ էր մինչեւ վերջին պահը”, - ասել է Գրոսը, - “այնուամենայնիվ, Խորհրդարանը հարթել է պայմանավորվածության հետ կապված բոլոր խնդիրները, որպեսզի ես կարողանայի իրականացնել իմ առաքելությունը: Ես դիտորդ չեմ՝ այդ բառի ողջ էությունը, ես պարզապես Եվրոպայի Խորհրդի ներկայացուցիչն եմ, որը հետեւել է հանրաքվեին: Հուլիսին մենք արդեն նշել ենք, որ միջազգային կազմակերպություններից ոչ մեկին չի հաջողվել լուրջ մոնիթորինգ անցկացնել”, - նշել է Գրոսը, - “այդ պատճառով արդար Հանրաքվե անցկացնելու վերաբերյալ քիչ վստահություն կա”:

Անդրեաս Գրոսը նշել է , որ նրա վրա մեծ տպավորություն է գործել ընտրել ցանկացողների մեծ թիվը: “այսպես, մինչ ժամը 9 Սումգայիթում քվեարկել էր 40 մարդ, եւ եթե դուք այս թիվը բազմապատկեք քվեարկության ողջ ընթացքով, դուք բավականին լավ արդյունք կստանաք: Ընդհանուր առմամբ, ընտրատեղամասերում մթնոլորտը ավելի լավ էր, քան նախորդ ընտրությունների ժամանակ: Բայց ինձ թվաց, որ շատ մարդիկ չգիտեին ինչպես քվեարկել: Նրանցից շատերը չէին հասկանում հարցերի իմաստը, նրանք բացում էին եւ հարցնում՝ ինչ անել: Բացի այդ եղան նաեւ դեպքեր, երբ քվեախցիկ էին մտնում մի քանի մարդ միաժամանակ: Այդ իսկ պատճառով չեմ կարծում, որ ընտրությունները “ապահով” էին:

Ձեր կարծիքով, հանրաքվեն քայլ էր դեպի առաջ, թե դեպի հետ ժողովրդավարության ճանապարհին:

Դիվանագիտության մեջ քայլ դեպի առաջ նշանակում է ինչ-որ առաջընթաց: Ադրբեջանում ժողովրդավարությունը դեռ միայն իր զարգացման առաջին փուլում է, այդ իսկ պատճառով քայլը դեպի հետ անհնար է: Միայն առաջընթացի հնարավորություն կա, մեծ առաջընթացի կամ ոչ այդքան: Ես կարծում եմ, որ եթե ինչ-որ մեկը որոշի գիրք գրել Ադրբեջանում ժողովրդավարության զարգացման մասին, նա նաեւ պետք է ընդգրկի այդ գրքում այս Հանրաքվեն: Ես ոչ մի երկիր չգիտեմ, որ 2 ամսում 39 փոփոխություն մտցնեք Սահմանադրության մեջ, այնուամենայնիվ Ադրբեջանի հասարակությանը հնարավորություն տրվեց հեռուստացույցով հետեւել կառավարության եւ

ընդդիմության քննարկումներին: Ես հավատում եմ, որ այս Հանրաքվեի ընթացքում ձեռք բերած փորձը մեծ առաջընթացի գրավական է: Այնուամենայնիվ, ես ցավով եմ ընդունում այն, որ Ադրբեջանը այն երկրների ցանկում է, որոնք օգտագործում են Հանրաքվեները ոչ ճիշտ ձևով: Մարդիկ պետք է բոլոր խնդիրները միասին քննարկեն: Այս ձևով խնդիրները քննարկելով՝ քաղաքական գործիչները ավելի մոտիկ են դառնում մարդկանց: Հանրաքվեն մարդկանց կրթելու լավ միջոց է: Հանրաքվեները լավ են անդրադառնում ինչպես հասարակության ինտեգրման, այնպես էլ իշխանությունների օրինական գոծունեության վրա: Բայց դրա համար անհրաժեշտ է ժամանակ եւ Հանրաքվեի “ճիշտ դիզայն”: Հանրաքվեն, որ կազմակերպվեց Ադրբեջանում օգոստոսի 24-ին ”վատ դիզայնի նշան էր”: Փաստորեն, քվեարկությունը ոչ մի արմատական փոփոխություն չբերեց հասարակության ինտեգրմանը կամ էլ իշխանությունների ճիշտ գործելակերպին: Ես իսկապես հույս ունեմ, որ հաջորդ անգամ, երբ իշխանությունները որոշեն անցկացնել մեկ այլ Հանրաքվե Ադրբեջանում, Նրանք կքննարկեն դա նրանց հետ, ովքեր գիտեն, թե ինչպես անցկացնել այն: Դա կօգնի խուսափել բացասական կողմերից:

Ինչպես եք պատրաստվում ներկայացնել այն, ինչ տեսաք Ադրբեջանում օգոստոսի 24-ին, ԵՆԽՎ մոնիտորինգի խմբի զեկույցի ժամանակ:

Ես դեռ չգիտեմ, քանի որ ես միակ մարդը չեմ ով պատրաստում է այդ փաստաթուղթը: Բայց ես կարող եմ ասել ձեզ, թե ինչ եմ նշելու զեկույցում: Ամենից առաջ կլինեն իմ տպավորությունները, որոնց մասին արդեն ասել եմ: Այնուհետև ես պետք է նշեմ, որ հանդիպել եմ մի ընդդիմադիր կուսակցության վստահված անձի, որն ասաց ինձ իրեն առաջարկված ընտրակաշառքի մասին: Նրանք ցանկանում էին, որ նա ստորագրի մի արձանագրություն, որում ասվում էր, որ ընտրողների թիվը այդ ընտրատարածքում համապատասխանում է պաշտոնական թվերին: Նա նաև ասաց ինձ, որ ընտրողների մասին ինձ սխալ տեղեկատվություն են տվել: Ըստ նրա ասածի միեւնույն մարդիկ քվեարկել էին մի քանի անգամ տարբեր ընտրատեղամասերում: Իմ կարծիքով այս ամենի պատճառը միջազգային դիտորդների բացակայությունն է: Ընդդիմության վստահված անձանց թիվը բավական չէր դրա համար:

Ես ունեմ նաև Սումգայիթի քվեարկության ճիշտ թվերը, քանի որ ես այնտեղ մնացել եմ մինչ ժամը 1-ը: 849 քվեաթերթիկներից 755-ը կամ 80%-ը, քվեարկել էր բոլոր փոփոխությունների օգտին: 30 մարդ “ոչ” էր ասել բոլոր կետերին: Եւ միայն 63 մարդ էր քվեարկել այլ ձևով: այդ 63 հոգին դեմ էր քվեարկել համամասնական սիստեմի փոփոխմանը, ինչպես նաև դեմ էր նախագահի 50%+1 ձայնով ընտրվելու սիստեմին եւ Նախագահի լիազորությունները Պառլամենտի փոխխոսնակից վարչապետին փոխանցելուն: Ուսումնասիրելով նրանց ընտրությունը՝ ես հասկացա, որ այդ 63 հոգին կարելու էր Ադրբեջանում ժողովրդավարության ապագա զարգացման համար, որովհետև նրանք գիտեն, թե ինչպես ճիշտ կարողալ եւ ինչպես ընտրել: Իսկ այն փաստը, որ շատ մարդիկ քվեարկել էին բոլոր փոփոխությունների “օգտին”, ցույց է տալիս, որ ընդդիմության մի շարք փաստարկներ լիովին ճիշտ են: 80%-ը չափազանց շատ է: Այս արդյունքները ցույց են տալիս, որ երբ մարդիկ խաբում են, նրանք մեծ ստեր են ասում, որոնք շատ սրամիտ չեն: Խելացի մարդիկ երբեք այդպիսի քայլերի չեն դիմում:

Դատելով այս թվերից՝ միգուցե մենք պետք է համաձայնենք որոշ պաշտոնյաների այն դիրքորոշման հետ, որ Ադրբեջանը ժողովրդավարության պատրաստ չէ:

Ճիշտ չէ, որ մի երկիր պատրաստ չէ ժողովրդավարության: դուք պետք է անեք առաջին քայլը, եթե նույնիսկ դուք կարծում եք, որ պատրաստ չեք ժողովրդավարությանը: Երբ մարդն առաջին անգամ ջուրն է մտնում, նա չգիտի լողալ, եւ նա սկսում է սովորել հենց տեղում: ժողովրդավարությունը մարդու իրավունքների մի մասն է, այն մարդկային արժանապատվության կարեւոր մասնիկ է: Երեխաները չեն ծնվում դեմոկրատ, նրանք սովորում են լինել դեմոկրատ իրենց կյանքի ընթացքում: Չնայած ձեր երկիրը ազատվել է տոտալիտար ռեժիմից միայն 12 տարի առաջ, դա չի նշանակում, որ ժողովուրդը ժողովրդավարության պատրաստ չէ: Օրինակ, Շվեյցարիան հասել է իր ժողովրդավարությանը օլիգարխիայի միջոցով: Դուք պետք է սկսեք այդ գործընթացը հիմա՝ ինչ-որ ժամանակ անց առաջընթաց տեսնելու համար: Իսկ եթե դուք հիմա ոչինչ չանեք, այդ դեպքում իրավիճակը միմիայն կվատանա մոտ ապագայում:

Երբ հաջորդ անգամ կայցելեք Ադրբեջան: Եւ երբ Փարիզում կքննարկվի Գրոսի եւ Կասսանի զեկույցը:

Միակ ամսաթիվը, որ հայտնի է, սեպտեմբերի 4-ն է, երբ էլ տեղի կունենա մոնիթորինգի խմբի հաջորդ հանդիպումը: Մենք պատրաստվում ենք քննարկել զեկույցի նախնական ծրագիրը մինչ այդ ամսաթիվը: հետո մենք կորոշենք, թե արդյոք մեր զեկույցը կընդգրկվի ԵՄԽՎ սեպտեմբերյան նստաշրջանի օրակարգում: Ինչ վերաբերում է իմ հաջորդ այցելությանը Ադրբեջան, ես կարծում եմ, որ զեկուցողները պետք է այցելեն երկիր, նրանք զեկույց են պատրաստում տարին մոտ 2 անգամ: Հաջորդ անգամ, երբ գանք այստեղ, մենք մեր ուշադրությունը կսեւեռենք միայն քաղաքական բանտարկյալների խնդրի վրա: Ես վերջապես հույս ունեմ այցելել Նարդարան, եթե այս այցելությունը տեղի ունենա: Նարդարանի խնդիրը եւս մեկ պատճառ է մեզ համար Ադրբեջան վերադառնալու համար: